



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Հայ ժողովրդի պատիվը բարձր պահելու առաքելություն

Սեպտեմբերի 18-20-ը Երեւանում կայանալու է Հայաստան-Սփյուռք 6-րդ համագումարը: Բնականաբար, ինչպես նախորդ համագումարներում, այս համաժողովի ընթացքում են քննարկվելու են բազմաթիվ կարեւոր հարցեր, հատկապես՝ կապված այն ակնկալիքների հետ, որոնք ունեն Հայաստանի իշխանությունները սփյուռքյան կառույցներից եւ համայնքների ներկայացուցիչներից: Այս ամենի կողքին, բնականաբար, քարոզչական նյութ են դառնալու Հայաստանի գրանցած առաջընթացը եւ հաջողությունները, այլ խոսքով՝ արածն ու չարածը: Այս մասշտաբի սփյուռքյան ներկայացուցիչների համախմբումը հանդիսանում է այն բեմահարթակը, որտեղ պետք է ստեղծել այն առիթն ու հնարավորությունը, որը կամրապնդի Սփյուռքի եւ Հայաստանի կապերը:

Նման համաժողովներում, ինչպես միշտ, կարեւորվում է նաեւ Արցախի դերի ու անելիքների հարցը: Հարց, որ շեշտվում է եռամիասնության գաղափարի շրջանակում: Այն ժամանակ առ ժամանակ արծարծվում է եւ քննարկվում առարկա դառնում հատկապես սփյուռքյան կառույցների ու անհատների հետ Արցախյան իշխանությունների հանդիպումների ժամանակ:

Արցախը գաղափարական առումով առանցքային նշանակություն ունի հայկական աշխարհում ժամանակակից ազգային գիտակցության կերտման եւ ուղղորդման գործում: Այս դերը եւ նշանակությունը նախ եւ առաջ պարտավորեցնող է, պարտավորեցնող երկուստեք: Իսկ այդ պարտականության գիտակցված ստանձնումը զարգացման եւ հաջողության կարեւորագույն երաշխիքն է:

ՀՀ Դաշնակցությունը, լինելով աշխարհասփյուռ կազմակերպություն եւ ավելի քան 35 երկրների հայկական համայնքներում, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում եւ Արցախում առանցքային նշանակություն ունեցող կուսակցություն, միշտ գիտակցել է այդ կարեւորագույն պարտականությունը: Այսօր, քաղաքական առումով, Արցախը աշխարհին ներկայացնող կարեւորագույն աշխատանք են ծավալում ՀՀ Դաշնակցության Գերագույն Սարմի նախաձեռնությամբ տեղի է ունեցել խորհրդածոլով՝ նվիրված Արցախյան հիմնահարցի կարեւորագույն խնդիրներին: Իսկ վերջերս Արցախում ականատեսը եղանք ՀՀ Դաշնակցության քույր միության՝ ՀՕՍ-ի անդամների այցելությանը, որն իմաստավորվեց «Սոսե» մանկապարտեզի նորակառույց շենքի բացման միջոցառմամբ: Եվ այս բոլորը սառցեբեկորի միայն երեւացող կողմն է, միայն մի բաժինն է այն ահեղի աշխատանքի, որ տարվում է Արցախի հիմնահարցի ուղղությամբ՝ թե քաղաքական, թե տնտեսական առումով:

Ինչպես ասվում է՝ մեղալն ունի նաեւ հակառակ երեսը: Որպես Արցախյան կողմ, ի դեմս Արցախի ժողովրդի, պետական համակարգի ու հատկապես իշխանությունների՝ ոչ պակաս պարտավորություն պետք է ստանձնենք ոչ միայն Արցախի հանդեպ տածված վատահոլությունն ու հեղինակությունը երաշխավորելու, այլ նաեւ գաղափարական առաջնորդության դափնին պահպանելու գործում:

Արցախի նախագահը եւս իր երդմանակալության արարողության ընթացքում անդրադարձավ այս հարցին՝ շեշտելով. «Մենք այս երկար տարիների ընթացքում իրականացրել եւ իրականացնում ենք առաքելություն՝ ուղղված հայ ժողովրդի պատիվը բարձր պահելուն: Ապագայում նույնպես մենք անելու ենք ամեն ինչ հայ ժողովրդի պատիվն եւ արժանապատվությունը բարձր պահելու համար»:



The Office of the NKR President V.D.

Բակո Սահակյանը ստանձնել է Արցախի նախագահի պաշտոնը

Սեպտեմբերի 7-ին ԱՀ ԱԺ նիստերի դահլիճում տեղի է ունեցել հատուկ նիստ՝ նվիրված Արցախի Հանրապետության նախագահի պաշտոնի ստանձնմանը:

Նախագահ Բակո Սահակյանը, աջը դնելով ԱՀ Սահմանադրության եւ 17-րդ դարի Ավետարանի վրա, հնչեցրել է ժողովրդին տրված հետեւյալ երդումը.

«Ստանձնելով Արցախի Հանրապետության նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները՝ հարգել մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ապահովել հանրապետության ինքնիշխանությունը, անկախությունը, տարածքային ամբողջականությունը եւ անվտանգությունը՝ ի փառս Արցախի Հանրապետության եւ ի բարօրություն Արցախի ժողովրդի»:

Նախագահ Բակո Սահակյանն իր ելույթում մասնավորապես նշել է.

«Այսօր Ձեր ներկայությամբ ես ուզում եմ ոչ թե հույս հայտնել, այլ համոզումը հայտնել, որ մենք ձեզ

հետ միասին ունակ ենք իրականացնելու գիտակցված, հետեւողական աշխատանք եւ իմ ներկայացրած ծրագիրը եւ առաջադրանքները կյանքի կոչելու:

Այս տարիների ընթացքում մեկ անգամ չէ, որ ես խոսել եմ Արցախի յուրահատուկ պատկանելիության մասին՝ նշելով, որ Արցախը պատկանում է ոչ միայն արցախցիներին, այլ՝ համայն հայությանը: Մենք այս երկար տարիների ընթացքում իրականացրել եւ իրականացնում ենք առաքելություն՝ ուղղված հայ ժողովրդի պատիվը բարձր պահելուն: Ապագայում նույնպես մենք անելու ենք ամեն ինչ հայ ժողովրդի պատիվն եւ արժանապատվությունը բարձր պահելու համար: Այդ ճանապարհին ես մեզ բոլորիս հաջողություն եմ ցանկանում», - ասել է նախագահ Բակո Սահակյանը:

Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը օրինել է նախագահի պաշտոնը ստանձնած Բակո Սահակյանին եւ նրան գորություն, առողջություն եւ ժողովրդին ի բարին առաջնորդելու

հույս հայտնել:

«Դուք ստանձնեցիք երկրի առաջնորդի պաշտոնը, եւ մեր աղոթքն է, որ դուք նույն ավյունով, նույն վճռականությամբ շարունակեք այս վսեմ պարտականությունը եւ առաջնորդեք մեր երկիրը դեպի բարգավաճում, խաղաղություն եւ հաջողություն: Դուք ղեկավարել եւ պետք է ղեկավարեք հերոսական ժողովրդի: Աստված տա, որ Ձեր առաջնորդությամբ մենք ավելիին հասնենք՝ մեր ազգային իղծերի իրականացմանը», - մասնավորապես ասել է Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Նախագահի երդմանակալության արարողությանը մասնակցում էին ԱՀ ԱԺ 31 պատգամավոր, ԱՀ անվտանգության խորհրդի եւ կառավարության անդամները, Գերագույն դատարանի նախագահն ու Վերաքննիչ եւ Առաջին ատյանի դատարանների նախագահները, Ստեփանակերտի քաղաքապետն ու շրջանային վարչակազմների ղեկավարները, Ղարաբաղյան շարժման մասնակիցներ ու հանրային գործիչներ:

Խորհրդածոլով՝ նվիրված Արցախի Հանրապետության հռչակման 26-ամյակին



Արցախի Հանրապետության հռչակման 26-ամյակի կապակցությամբ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը այլ միջոցառումների շարքում կազմակերպել էր խորհրդածոլով: Խորհրդածոլովը տեղի ունեցավ սեպտեմբերի 4-ին, Երեւանում...

Կարդացեք 2-րդ էջում

Ստեփանակերտում վերաբացվեց ՀՕՍ-ի «Սոսե» մանկապարտեզը



Արցախում Հայ օգնության միության բազմաթիվ հաջողված ծրագրերից մեկը «Սոսե» մանկապարտեզների ծրագիրն է: Սեպտեմբերի 6-ին մեծ շուքով Ստեփանակերտում վերաբացվեց «Սոսե» մանկապարտեզը:

Կարդացեք 4-րդ էջում

Ստեփանակերտում վերաբացվեց ՀՕՍ-ի «Սոսե» մանկապարտեզը



Արցախում Հայ օգնության միության բազմաթիվ հաջողված ծրագրերից մեկը «Սոսե» մանկապարտեզների ծրագիրն է: Սեպտեմբերի 6-ին մեծ շուքով Ստեփանակերտում վերաբացվեց «Սոսե» մանկապարտեզը: Միջոցառմանը ներկա էին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգե արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, վարչապետ Արայիկ Հարությունյանը, ԱՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, ԱԺ փոխնախագահ Վահրամ Բալայանը, ՀՀ Արցախի Կենտրոնական կոմիտեի անդամները, աշխարհի տասնյակ երկրներից Արցախ ժամանած ՀՕՍ-ուհիները և հրավիրյալներ:

ԱՀ նախագահ Բակո Սահակյանը երախտագիտություն է հայտնել բոլոր նրանց, ովքեր մասնակցել են այս հայրենանվեր նախաձեռնության իրականացմանը՝ մեր ժողովրդի հոգսերով ապրելու, հայրենիքին միշտ օգտակար լինելու պատրաստակամության համար:

«Արցախի նախադպրոցական հաստատությունների շարքում կարևոր դերակատարություն ունի «Սոսե» մանկապարտեզների ցանցը, որը հիմնադրվել է Սփյուռքի մեր հայրենակիցների ջանքերով և հանդիսանում է Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության յուրահատուկ մի խորհրդանիշ», - ասել է Բակո Սահակյանը:

Հազարավոր հայեր աշխարհի ամենատարբեր անկյուններից մեկտեղվել են ընդհանուր նպատակի շուրջ՝ ստեփանակերտցի երեխաներին հարմարավետ ու գեղեցիկ մանկապարտեզ սկիզբելու: Հայ

հավատքի և հայրենասիրության մեջ: Մեր ազնիվ ու նվիրյալ ՀՕՍ-ուհիները կյանքի կոչեցին այս գեղեցիկ ծրագիրը, որը նման է եւս մի ռազմավարական բարձունքի նվաճման: Աստված հավերժ օրհնի ՀՕՍ-ուհիներին, այս մանկապարտեզի մանուկներին ու դաստիարակներին և մեր հայրենիքն ու ազգը», - նշված է Հայ առաքելական եկեղեցու Արցախյան թեմի ուղերձի մեջ:

Մանկապարտեզի նոր շենքի բացման արարողության ժամանակ ՀՕՍ-ի Կենտրոնական վարչության ատենապետուհի Կարոլին Շմավոնյանն իր ելույթում նշել է, որ մանկապարտեզի նոր շենքի կառուցումը հիմնաքար է հայոց պատմության էջերում և իր դռներն է բացում իբրև կոթող:

«Հայ ազգի ամենաթանկագին գանձերը մեր մանուկներն են՝ մեր պատմության, մշակույթի և ինքնության գոյատևման իրականացումը երաշխավորող անփոխարինելի գրավակները: Այս խորը համոզումով և նվիրումով առաջնորդված ՀՕՍ-ը 107 տարի շարունակ մայրական հոգատարությամբ նվիրված է մատաղ սերնդի հայեցի դաստիարակությանը», - ասել է Կարոլին Շմավոնյանը:

ՀՀ Բյուրոյի անդամ, ՀՕՍ-ի պատասխանատու Հակոբ Տեր-Խաչատրյանը, դիմելով աշխարհի տասնյակ երկրներից Արցախ ժամանած ՀՕՍ-ուհիներին, նշել է, որ ՀՕՍ-ը իր գործունեությունը սկսել է հայոց պատմության ամենաճակատագրական պահին և ստանձնել է օգնության խաչ լինելու պատասխանատվությունը:

«Որպես ՀՀ Դաշնակցության քույր կառույց, ՀՕՍ-ը թիկունք է կանգնել հայ ժո-

ղինակելի՝ իր մտահոգմամբ, թանկ՝ բովանդակությամբ ու անունով, ՀՕՍ-ի Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզն այսուհետ քաղաքի զարդերից մեկն է լինելու: Մանկապարտեզի վերաշինության հանձնախմբի ատենապետուհի Անժել Մանուկյանը, դիմելով միջոցառման ներկաներին, նշել է, որ ՀՕՍ-ը հավիտյան կապված կմնա հայրենի հողի և հայ ժողովրդի հետ. «Որպես հայ մայր, որպես ՀՕՍ-ուհի, բարոյական պարտականություն ունեմ ծառայելու հայրենիքին և նրա զավակներին: Արցախն իր ազատագրված տարածքներով հավիտյան պետք է մնա միաձուլվել», - շեշտել է Անժել Մանուկյանը:

ՀՕՍ-ի Արցախի միավորի ատենապետուհու պարտականությունները ստանձնած Ռուզաննա Աբրահամյանը, դիմելով ներկաներին, շեշտել է.

«Սոսե մանկապարտեզը դառնալու է յուրօրինակ եկեղեցի, որի քահանան հայ կինն է լինելու: Եթե հայ կինը կարող է այսպիսի շքեղություն կերտել, ապա ինչեր կարող են անել մեր այրերը», - նշել է Ռ. Աբրահամյանը և ընդգծել, որ այս շենքից դուրս են գալու նպատակասլաց և գիտությանն ու աշխատանքին նվիրված սերունդներ:

Անժել Մանուկյանը:

Աշխարհի տարբեր ծայրերից սեպտեմբերի սկզբներին Արցախ ժամանած ավելի քան 450 ՀՕՍ-ուհիները մի քանի օրվա ընթացքում հասցրել են ավելի կապվել մայր հայրենիքին:

«Բոլորը միշտ էլ սիրով են գալիս Արցախ և յուրահատուկ տպավորություններ են ստանում», - «Ապառաժ»-ի հետ զրույցում ասել է Ֆրանսիայի Կապույտ խաչի ատենապետուհի Սեւան Մարտիրոսյանը:

Ֆրանսիայից ժամանած 40 հոգանոց խմբից միայն մի քանիսն են առաջին անգամ Արցախում. մեծամասնությունը 1-2 անգամ արդեն եղել է այստեղ:

ՀՕՍ-ի բազմամարդ պատվիրակությունը, բացի Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի բացման արարողությանը մասնակցելուց, ներկա է գտնվել նաև Շուշիում ՀՀԴ կենտրոնի բացմանը, այցելել է գործառույթ, Արցախի տեսարժան վայրեր: «Նախագահ Բակո Սահակյանը ՀՕՍ-ուհիների պատվին ընթրիք կազմակերպեց, որը մեզ համար շատ հաճելի էր: Արցախի ժողովրդի ընդունելությունից նոր ուժ ստացանք, ավելի ոգեւորվեցինք», - նշել է Սեւան Մարտիրոսյանը և հավելել, որ գալիք տարի Ֆրանսիայի Կա-



Ամերիկայի Արեւմտյան և Արեւելյան շրջանների, Մեծ Բրիտանիայի, Ավստրալիայի, Ֆրանսիայի և Արցախի ՀՕՍ-ուհիներից բաղկացած հանձնախմբի և ՀՕՍ-ի աշխարհասփյուռ միավորների ջանքերով հնարավոր եղավ ավելի քան 1 մլն դոլլար ապահովել՝ իրականացնելու համար այս բացառիկ ծրագիրը:

«Արցախը հայ ժողովրդի, մանավանդ ՀՕՍ-ի ընկերուհիների սրտում առանձնահատուկ տեղ ունի», - «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է մանկապարտեզի վերաշինության հանձնախմբի ատենապետուհի Անժել Մանուկյանը և ավելացրել, որ երբ «Սոսե» մանկապարտեզի վերաշինման կամ պետությանը հանձնելու հարցն էր դրված, առանց երկմտելու որոշեցին վերակառուցել:

Հանձնախմբի առաջին ժողովին որոշեցին 2 տարվա ընթացքում կազմակերպել՝ հանգանակել, կառուցել և նախատեսված ժամկետներում ավարտել, որովհետև «ՀՕՍ-ը պետք է իր խոստումները կատարի»:

«Դրամահավաքը մեծ աշխատանք է, ամենափոքր գումարից մինչև ամենամեծ գումարը բոլորը սիրահոժար տրամադրեցին, և կարողացան հանգանակել անհրաժեշտ գումարը», - շեշտել է Անժել Մանուկյանը:

Ինչ վերաբերում է առաջիկա ծրագրերին, ապա ՀՕՍ-ը Արցախում 8 մանկապարտեզ ունի, որոնց ներկայությունը պիտի պահեն: «Այս համալիրի ամբողջացումից հետո պետք է մտածենք այլ կարևոր ծրագրերի մասին», - հավելել է

պույտ խաչի 90-ամյակը պիտի տոնեն, որին նվիրված ցուցահանդեսներ, համերգներ, դասախոսություններ են նախատեսվում: Տոնակատարությունը կմեկնարկի 2018թ. մարտի 8-ին:

Իսկ Կիպրոսի ՀՕՍ-ի պատվիրակությունն այս անգամ Արցախ է այցելել 16 հոգանոց կազմով: 1998թ. Ստեփանակերտի առաջին մանկապարտեզի նորոգմանը եւս ՀՕՍ-ի Կիպրոսի մասնաճյուղը մեծ ներդրում ունեցավ: Այն ժամանակ էլ խմբով մասնակցել են բացման արարողությանը: «Արցախում այս տարիներին շատ բան է փոխվել դեպի լավը՝ նոր շինություններ, բարեկարգված ճանապարհներ, նոր հյուրանոցներ», - ոգեւորությամբ նշում է Կիպրոսի պատվիրակության պատասխանատու Վերա Դավիդյանը՝ շեշտելով, որ ՀՕՍ-ի ծրագրերի մեջ միշտ էլ Հայաստանն ու Արցախը առաջնահերթ տեղ ունեն:

Հայ օգնության միության Արցախի մասնաճյուղն այս տարի տոնում է կազմավորման 25-ամյակը: ՀՕՍ-ի Արցախյան միավորի 25-ամյակի կապակցությամբ սեպտեմբերի 7-ին կազմակերպվել էր տոնական խնջույք, որն ուղեկցվել է ազգային երգ ու պարով, Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի սաների ելույթներով: Խնջույքին մասնակցող ՀՕՍ-ի տարբեր կառույցներ շնորհավորական խոսք են ուղղել Արցախյան մասնաճյուղին՝ մաղթելով ուժ ու կորով նորանոր ծրագրեր իրականություն դարձնելու համար:

«ԱՊԱՐԱԺ»



Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգե արքեպիսկոպոս Մարտիրոսյանը օրհնել է նորակառույց մանկապարտեզը և հանդես եկել ելույթով:

«Այս նորակառույց շինությունը պետք է դառնա մեր մանուկների համար օջախ, որտեղ նրանք պետք է ստանան հայեցի դաստիարակություն և հասակ առնեն

ղովրդին և պատվով կատարել իր գործը: Արցախի գոյամարտի առաջին օրերից ներկա էիք Արցախում՝ տարբեր ծրագրերով, որի արգասիքն է այսօր «Սոսե» մանկապարտեզների ցանցը: Արցախը ոչ միայն պետք է գոյատևի, այլ բարգավաճի, ընդարձակվի և միանա Հայաստանին», - ասել է Հակոբ Տեր-Խաչատրյանը և հաղթական երթ մաղթել ՀՕՍ-ի կառույցին:

Քամանչայի ելեւելները Մասիսի գագաթին



բեմնի փառքը: Դա իմ գործն է»: Դակոբ Խալաթյանը Արցախ է տեղափոխվել ԱԶ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության հրավերով: Դասավանդում է Շուշիի Դանիել Ղազարյանի անվան դպրոցում, Գրիգոր Նարեկացու անվան կենտրոնում, նաեւ՝ նվագում է Ստեփանակերտի ժողովրդիչների նվագախումբում:

«Ես չեմ զլանում, դրա համար էլ եկել եմ Ղարաբաղ», - ասում է վարպետը:

Քանոն, դիոլ, քամանչա, վրձին՝ փոքր տարիքում Դակոբ Խալաթյանի «խաղալիքները» տարբերվում էին մյուս երեխաների խաղալիքներից: Մշակույթի, արվեստի ու արհեստի խաչմերուկ Շուշի տեղափոխվելիս Խալաթյանը ինամբով հավաքել է իր մանկության «խաղալիքները» եւ հաստատվել Արցախում:

«Իմ ես-ը հանել, բերել եմ իմ հետ: Ինձանից երեւանում ոչինչ չի մնացել, միայն կինս եւ երկու զավակներս», - պատմում է ծնունդով երեւանցի Դ. Խալաթյանը:

Նա չի հիշում իր արմատներում առկա ոչ մի ստեղծագործող ճյուղ, բայց այդ հանգամանքը երբեք չի խանգարել նրան՝ տիրապետել Սայաթ-Նովայի «այբուբենին» եւ հնչեցնել այն յուրովի. «Ինքս միշտ ձգտել եմ դեպի արվեստը: Դրանում երեւի իր մեծ դերն է ունեցել ստացածս դաստիարակությունը: Ծիշտ է, ծնողներս երբեք կապ չեն ունեցել արվեստի հետ, բայց մեր կրթության մեջ բացառապես հենց դրա վրա են շեշտը դրել: Դիշում եմ՝ ինչպես էր քույրս քանոն նվագում, իսկ ես սեղանի վրա «դիոլ խփելով»

ձայնակցում էի նրան: Այս տեսնելով՝ հայրս ինձ համար դիոլ գնեց: Նկարել նույնպես սիրում էի: Նկարում էի՝ անկախ ամեն ինչից, քանի որ դրա համար առանձնապես ինչ-որ բան գնելու անհրաժեշտություն չկար. ձեռքս տակ ընկած գրիչն ու մատիտն ինձ լիովին բավարարում էին»:

Ճակատագիրը պետք է որոշեր, թե ինչ ուղղությամբ կգնա բազմաշնորհ մանուկը՝ նկարիչ կդառնա, թե երաժիշտ: 13 տարեկանում հայրը նրան տանում է Մարտին Խաչատրյանի մոտ, ով եւ հետագայում դառնում է տղայի երաժշտության առաջին ուսուցիչը. «Հայրիկիս խնդրանքով նա սկսեց ինձ քամանչա նվագել սովորեցնել: Այստեղից սկսվեց իմ մեծ սերը դեպի այդ նվագարանը»: Առաջին քամանչան, որի վրա նվագեց, հորաքրոջ տան պատից կախված էին քամանչան էր:

Թեպետ Դակոբ Խալաթյանը նկարչական կրթություն այդպես էլ չստացավ, այնուհանդերձ շարունակեց նկարել:

20-25 տարեկանում երիտասարդին շարունակ մի միտք էր տանջում. «Պետրոս Դուրյանը մահացել է 20 տարեկանում, բայց այդ ժամանակահատվածը հասցրել է այնպես ապրել, որ առ այսօր նրան հիշում են: Նույնն էլ Մոցարտը... Իսկ ես շարունակ հետ եմ նայում եւ չեմ կարողանում իմ ապրած կյանքում գտնել մի բան, ինչի համար ինձ կհիշեն»: Այս գաղափարով ոգեշնչված՝ Դ. Խալաթյանը որոշում է քամանչայի վրա նվագել Ա. Խաչատրյանի ջութակի կոնցերտը, քանի որ այդպիսի բան դեռեւս ոչ-ոքի չէր հաջողվել անել: Աշխատանքը հաջողությամբ իրականացվեց եւ ներկայացվեց

Բաքվում տեղի ունեցող միջպետական մրցույթում:

«Բայց ինձ համար ամենամեծ ձեռքբերումը քամանչայի ելեւելները մինչեւ Մասիսի գագաթ հասցնելն էր», - ասում է Դ. Խալաթյանը:

1998-ին քամանչան Դակոբ Խալաթյանի կողմից արդեն հնչել էր Արագածի գագաթին, այնուհետեւ՝ Արա լեռան: Դեպի Մասիս ուղևորվեցին 2011թ. սեպտեմբերի 21-ին՝ Անկախության օրը: Այս հանգամանքը քամանչահարը խորհրդանշական է համարում: Այդ առիթով՝ Մասիսի գագաթին նվագեց Հայաստանի օրհներգը:

Արկածներից խուսափել չհաջողվեց: Մի պատահար կարող էր կանխորոշիչ լինել. «Շուրջբուրդը մառախուղ էր, բայց մենք շարունակում էինք մագլցել: Քամանչան մոտավորապես 4-5 կգ էր կշռում, որը ես կրում էի ուսերիս վրա եւ որը բավական դժվարացնում էր առանց այն էլ դժվարին վերելքը: Հանկարծ, ինձ համար անսպասելի, պարանը, որին կապված էր քամանչան, պոկվեց, եւ ես էլ չնկատեցի, թե ինչպես բռնեցի այն: Այլապես, չգիտեմ որտեղից կգտնեի եւ ինչ վիճակում», - պատմում է քամանչահարը եւ հպարտ-հպարտ ասում, որ մեղեդին հնչել է լեռան գագաթից:

Արկածախնդիր հայը խոստանում է Արարատով չսահմանափակվել: Քամանչայի հետ իր հաջորդ վերելքը հասցրել է նրան Շուշի:

«Ամեն նոր ձեռքբերում պետք է գերազանցի նախորդին, հակառակ դեպքում՝ այն ձեռքբերում չես անվանի: Գիտեմ միայն մի բան. քանի ես պետք եմ Շուշիին, ես այստեղ կլինեմ»:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Տեղի է ունեցել «Շուշի. 48 ժամ» եռալեզու պատկերագրի շնորհանդեսը

Սեպտեմբերի 12-ին Շուշիի Կերպարվեստի պետական թանգարանում կայացել է «Շուշի. 48 ժամ» եռալեզու պատկերագրի շնորհանդեսը: Գիրքը ստեղծվել է 2017 թ. հունիսին մեկնարկած Համագային հայ կրթական եւ մշակութային միության լուսանկարչական նախագծի արդյունքում, որը նվիրված էր Շուշիի ազատագրման 25-ամյակին:

Նախաձեռնության նպատակն էր 48 ժամում ցույց տալ Շուշիի քաղաքային կյանքի բազմազանությունը երիտասարդ լուսանկարիչների աչքերով: Այս գրքի շնորհիվ հանրության առավել լայն շրջանակ հնարավորություն կունենա հաղորդակից լինելու Արցախի մշակութային մայրաքաղաքի հմայքին, ճանաչելու եւ հասկանալու շուշեցուն ու նրա քաղաքային առօրյան:

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Լեւոնիկ Հովհաննիսյանն իր խոսքում նշել է, որ այս միջոցառումով ազդարարվում է համագային կարեւոր կառույցի ներկայությունն Արցախում, որը, ըստ նրա, մեծ նպաստ կբերի Արցախի Հանրապետության կրթամշակութային զարգացմանը:

Նախաձեռնության հեղինակներից Համագային հայ կրթական եւ մշակութային միության Կենտրոնական վարչության անդամ Սպարտակ Ղարաբաղյանը կարեւորել է Շուշիին նվիրված պատկերագրի լույս ընծայումը: Ընթերցելով շուշեցի հայտնի գործիչ Վահան Նավասարդյանի մոր նամակը որդուն, որի հիմնական ուղերձն էր՝ Շուշին քաղցր է շուշեցիներով, Սպարտակ Ղարաբաղյանը եզրակացնում է՝ «Շուշին մեր բոլորի

երուսաղեմն է: Ուրեմն, նոր հանդիպումների, նոր հրատարակությունների, նոր նամակների, հիշողությունների վերընթերցմամբ ու մեզ նորոգելով հզորանանք»:

ԱԶ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Նարինե Աղաբալյանը, շնորհավորելով Համագային հայ կրթական եւ մշակութային միության գրասենյակի բացումն



Արցախում, շեշտել է, որ Շուշին տարբեր է, ամեն մեկի հայացքում՝ յուրահատուկ, եւ հնարավոր չէ մի պատկերագրում պատկերել ամբողջական Շուշին: «Պատկերագրի մեջ պատկերված է շուշեցին: Ամենակարեւոր շեշտադրումը կյանքն է, մարդկանց դեմքերի ժպիտը, լույսը», - ավելացրել է Նարինե Աղաբալյանը:

Լրագրող, մեկնաբան, ՀՀԿՄՄ Արցախ-

յան մասնաճյուղի խորհրդի անդամ Միքայել Հաջյանը կարեւորել է այն հանգամանքը, որ հայոց մշակութային, քաղաքական կենտրոններից մեկը՝ Շուշին, վերականգնում է իր նախկին կարգավիճակը: «Պատկերագիրը ուխտագնացություն է դեպի հայոց սուրբ սրբոց քաղաքներից մեկը՝ Շուշի», - ասել է Միքայել Հաջյանը ու ավելացրել, որ այն Շուշի ամենօրյա կյանքն է՝ իր բնակիչներով եւ

ները չեն ունեցել նախաձեռնությունը քաղաքական բեմահարթակ մղելու նպատակ, բայց մենք այդ ամենը դիտարկում ենք քաղաքական ենթատեքստում, որովհետեւ Շուշին, լինելով մշակութային կենտրոն, կարող է ազդակներ փոխանցել հայկական քաղաքականությանը», - շեշտել է Դավիթ Իշխանյանը:

Նախաձեռնողների կողմից հատուկ պարգևների եւ արժանացել պատկերագրում ընդգրկված լուսանկարների հեղինակներից Գերման Ավագյանը եւ Յուրի Մեչետովը:

«Առաջին անգամ Շուշին տեսել եմ 1995 թ.: Այն ժամանակ Շուշին լրիվությամբ քանդված, անմխիթար վիճակում էր, եւ հիմա ուրախ եմ, որ տեսնում եմ այս փոփոխությունները», - նշել է Յուրի Մեչետովը:

Շնորհանդեսին ներկա էին ԱԶ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Նարինե Աղաբալյանը, արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Կարեն Միրզոյանը, կրթության, գիտության եւ սպորտի նախարարի պաշտոնակատար Սլավա Արայանը, ԱԶ ԱԺ փոխնախագահ Վահրամ Բալայանը, պատգամավորներ, Շուշիի քաղաքապետ Արծվիկ Մինասյանը եւ այլ հյուրեր:

Ավելացնենք, որ «Շուշի. 48 ժամ» նախագիծն իրականացվել է վավերագրող լուսանկարիչ, փաստագրական լուսանկարչության համար «Ֆիֆտի Զրոուզ» միջազգային ֆոնդի մրցանակակիր Գերման Ավագյանի հետ գործակցաբար:

Տաթևիկ ԱՂԱԶՆՅԱՆ

«Ապառաժ»-ը 100 տարի առաջ եւ այսօր

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն

Շուշի. Յուլիս 25-ին կայացաւ Հայ Յեղ. Դաշնակցութեան չորրորդ շրջանի՝ գորակողի, Քամու ջաղացի եւ Ղուվուղի թաղերի Դաշնակցական ընկերների եւ համակրողների ժողովը, ուր խօսեց ընկեր Պեր. Բալայեան- թաղային ժողովների կարեւորութեան եւ նրանց կատարելիք աշխատանքների մասին: Վերջում ընտրեց վարչութիւն:

- Յուլիս 23-ին կայացաւ Շուշու հայ բանւոր արհեստավորների ընդհանուր ժողովը, ուր գաղտնի քննարկութեամբ ընտրել են որպէս ներկայացուցիչներ Շուշու Չինուրական, Բանուրական եւ Գիւղացիական խորհրդի համար Հայկազ Վարդապետեան, Սարգիս Աւագեան եւ Սարգիս Դադեան:

- Ամսոյ 27-ին երեկոյեան Մարիամ Ղուկասեան օր. Դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ առաջին շրջանի թաղային ընդհանուր ժողովը. ժողովի նախագահ ընկ. Գ. Բալայեանը ողջունելով ազատ քաղաքացիների առաջին ազատ թաղային ժողովը, անցում է իսկական նիւթին. Ընկերը խօսում է Հ.Յ. Դաշնակցութեան անցեալ եւ ներկայ գործունեութեան եւ ներկայ պատմական մոմենտի մասին՝ կանգ առնելով մի շարք հրատապ խնդիրների շուրջը, որտեղ Դաշնակցութիւնը այսօր ուժեղ թափով մասնակցում է:

Խօսեցին ընկերներ Ա. Տեր-Միքայելե-

անը Դաշնակցութեան ծրագրի եւ գործունեութեան մասին, Ա. Թումեան, Վ. Նավասարդեան, Ս. Աւագեան, որոնք կոչ արին կազմակերպել եւ համախմբել Հ.Յ. Դաշնակցութեան շուրջը:

- Ամսոյ 28-ին երեկոյեան Ղուկասեան օր. Դպրոցի շէնքում կայացաւ բոլոր թաղերի վարչութիւնների ընդհանուր ժողովը:

Սպիտակ-շէն - Դաշնակցութեան շրջիկը գումարեց գիւղացիական հասարակական ժողով. խօսեց քաղաքական մոմենտի շուրջ:

Գիւղացիք տնտեսապէս լաւ վիճակում են: Գիւղը ոչ հաց ունի, ոչ ջուր եւ ոչ սերմացու. Անասունների կերը խիստ սակաւ է:

Թշվառութիւնը կատարեալ է:

Անցորդ

Աջաւ. 13 յուլիսի. - Դպրոցի շէնքում կայացաւ գիւղական ժողով, բայց մտքերի կարծ փոխանակութիւնից յետոյ յետաձգեց կիրակի:

Կիրակի գումարեց բազմամարդ ժողով, ուր Հ.Յ.Դ. Շուշու կոմիտէի շրջիկ ընկ. Աբր. Կեսիբէկեանը խօսեց ազգային ժողովի հարակից հարցերի շուրջ:

Բանազուր - Տեղի ունեցաւ գիւղացիների բազմամարդ ժողով, ուր Հ.Յ. Դաշ-



նակցութեան պրօպագանդիստ ընկ. Սեւակնեանը դարաբաղցիների բարբառով խօսեց ռուսական յեղափոխութեան, ընտրական քառանդամ սիստեմի, կօօպերացիայի եւ գումարելիք ռուսահայոց համագումարի մասին: Մեր գիւղն առհասարակ շատ կարօտ է նման խօսքի ու տեղեկութիւնների, այնպէս որ չափազանց ուրախակի կը լինէր, եթէ Շուշու Դաշնակցութեան կոմիտէն մեզ մոտ անելի յաճախ շրջիկ ընկերներ ուղարկէր:

Յոր. Տեղս գալով Շուշու Հ. Յ. Դաշնակցութեան կոմիտէի կողմից ուղարկւած շրջիկը երկար խօսեց Ռուսաստանի

այժմեան յեղաշրջման մասին եւ ապա բացատրելով ընտրական եղանակները, կոչ արել ներկայ գտնուող բազմաթիւ տղամարդկանց եւ կանանց պատրաստելու տեղի ունենալիք թէ Սահմանադիր ժողովի եւ թէ ազգային համագումարի ընտրութիւնների համար: Վերջում խօսք եղաւ գիւղումս կօօպերատիւ խանութ բաց անելու մասին, որի իրականացման անհրաժեշտութիւնն անելի քան զգացում է այստեղ:

Ունկնդիր

**Առաջին 1917 տարի
Կիրակի 30 յուլիսի
N 13**

Լեռնային տուրիզմն Արցախում զարգացման լայն հնարավորութիւններ ունի



Մեր երկրի նման ռելիեֆ եւ բնութիւն ունեցող վայրում լեռնային եւ էքստրեմալ տուրիզմը շատ արդիական է եւ ունի զարգացման լայն հնարավորութիւններ:

«Չքոսաշրջության այս տեսակի զարգացման հնարավորութիւնները մեծ են: Տարեցտարի ավելանում է մասնակիցների թիվը, անընդհատ նոր մարդիկ են միանում մեզ», - նշում է Արցախում 2010թ. գործող Free Step լեռնային եւ էքստրեմալ տուրիզմի արշավական ակումբի հիմնադիր ու ղեկավար Ազատ Աղամյանը:

Ակումբը զբաղվում է լեռնագնացու-

թյամբ, փորձում է Արցախում զարգացնել այս ուղղությունը: Ակումբն ունի անդամներ, տարվա ընթացքում կազմակերպում են արշավներ, համագործակցում են ՀՀ լեռնային տուրիզմի եւ ալպինիզմի ֆեդերացիայի հետ, Ստեփանակերտի սպորտային տուրիզմի ֆեդերացիայի հետ: Արշավների մասնակցության սահմանափակում չկա, բայց հիմնականում մասնակցում են 20-35 տարեկան անձինք: Երիտասարդներին սովորեցնում են, թէ ինչպէս պետք է իրենց պահեն լեռնային պայմաններում, ծանոթացնում են տեղի լանդշաֆտին, սովորեցնում են լեռ-

նային արահետներին, ինչը շատ կարեւոր է հատկապէս պատերազմական պայմաններում:

Ինչ վերաբերում է հիմնական ուղղություններին, ապա, ըստ Ազատի, Արցախի տարածքում գտնվող բոլոր բարձունքները, բացի Գոմշասարից, նախընտրելի ուղղություններ են, իսկ զբոսաշրջիկների մոտ ամենապահանջվածը Կաչաղակաբերդն է:

Այս ամառ Ազատի նախաձեռնությամբ Արցախում նաեւ ժայռամագլցման հիմնական ուղի է ստեղծվել՝ դեպի Շոշ տանող ճանապարհի աջ մասում. «Կարծում եմ՝ Արցախն առաջ տանող

ճյուղերից մեկը շուտով լինելու է հենց էքստրիմ-տուրիզմը», - ավելացնում է Ազատը:

«Ցանկացած ակտիվություն (մտավոր կամ ֆիզիկական) նոր շարժիչ ուժ է տալիս, որը ոգեշնչում է նոր սխրանքների եւ կյանքին նոր լիցք է հաղորդում», - համոզված է փորձառու լեռնագնացը: Իհարկէ, լեռնագնացությունը բավա-

Այդ բոլոր փորձություններն անցնելուց հետո բնությունը կպարզեատրի հիանալի տեսարանով, որը բացվում է սարի գագաթից՝ ներքեւում սփռված անծայրածիր տարածություն եւ տեղ-տեղ խոյացող այլ ալեհեր գագաթներ, որոնք դու անպայման կհաղթահարես հաջորդ անգամ:

Լեռները միայն քարերն ու ժայռերը



կանին ակտիվ հանգստի տեսակ է եւ պահանջում է որոշակի ֆիզիկական պատրաստվածություն: Բայց հմուտ ուղեկցորդի հետ կարելի է հաղթահարել ցանկացած խոչընդոտ ու անակնկալ:

չեն. ոմանց համար նրանք դառնում են կյանքի իմաստ:

«ԱՊԱՐԱՅ»